

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի 2019-2024թթ. աշխատանքային
գործունեության հայեցակարգ

Կազմեց՝ Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնատեղի
հավակնորդ ֆմ. գ. թ. Հ. Ֆ. Գրիգորյան

Ներածություն

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի 2019-2024թթ. աշխատանքային գործունեության հայեցակարգի նպատակն է մատնանշել այն հիմնական ռազմավարական ուղղությունները, դրանց խնդիրները, նպատակներին հասնելու քայլերը: Առանձացված են չորս հիմնական ռազմավարական ուղղություններ, որոնցից հիման վրա, ընտրվելու դեպքում, կկազմվի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի 2019-2024թթ. ռազմավարությունը:

Նախապատմություն

Վանաձորի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը գործում է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի հիմնադրման օրից՝ 1969 թվականի սեպտեմբերի 1-ից, ընդ որում ֆակուլտետն ուներ 2 մասնագիտություն՝ «Մաթեմատիկա» և «ֆիզիկա», որոնց սպասարկում էին ֆակուլտետի 3 ամբիոններ.

«Մաթեմատիկական անալիզի, տարրական մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի»

«Երկրաչափության և հանրահաշվի

«Ֆիզիկայի»:

1969-70 ուստարում ֆակուլտետում, ինչպես ողջ ինստիտուտում, գործում էր միայն հեռակա ուսուցման համակարգը:

1970 թվականին ընդունելություն կատարվեց նաև առկա ուսուցման համակարգում. 50 դիմորդներ դարձան ֆակուլտետի 2 մասնագիտությունների առկա ուսուցման առաջին ուսանողները՝ յուրաքանչյուրում 25-ական:

1974 թվականին կազմավորվեց «Տարրական մաթեմատիկայի և դասավանդման մեթոդիկայի» ամբիոնը:

1975 թվականին ընդունելություն կատարվեց նաև առկա ուսուցման համակարգի «Ընդհանուր տեխնիկական առարկաներ՝ լրացուցիչ ֆիզիկա»

մասնագիտությամբ: Նշված մասնագիտությամբ ընդունելություն կատարվեց երեք ուստարիներում: 1978-79 ուստարվանից ընդունելությունը ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգում կատարվեց «Ընդհանուր տեխնիկական առարկաներ և աշխատանք» մասնագիտությամբ:

1982-83 ուստարում կազմավորվեց «Ընդհանուր տեխնիկական առարկաներ» ամբիոնը:

1983 թվականին ինստիտուտի այդ տարիների ռեկտոր Ս.Ն.Մերգելյանի ջանքերով թույլատրվեց ընդունելություն կատարել նաև «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ, որը շարունակվեց մինչև 1986թ.:

1992 թվականից «Մաթեմատիկա» մասնագիտությանը ավելացավ «Ինֆորմատիկա լրացուցիչ մասնագիտացումը», իսկ 1994 թվականից կազմավորվեց «Ինֆորմատիկա և ՏՄՄ» ամբիոնը:

1995 թվականին հանրապետությունում դադարեցվեց հեռակա ուսուցումը, որը կրկին ծնունդ առավ 2000 թվականին, սակայն որպես առանձին համակարգ:

2007 թվականին հեռակա բաժնից բակալավրիատը անջատվեց և երեք մասնագիտություն՝ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա» տրվեց ֆակուլտետին:

Ֆակուլտետի գոյության սկզբում մասնագիտական ամբիոններում աշխատող դասախոսներից միայն երեքն ունեին գիտական աստճան (Հ.Արզումանյան, Էդ.Շահինազարյան և Հ.Հովհաննիսյան): Այսօր ֆակուլտետում դասավանդում են գիտության 2 դոկտոր, 20-ից ավելի գիտության թեկնածու, դոցենտներ և 2-ը՝ գիտական աստիճանի հայցորդներ:

Տարբեր տարիներում ֆակուլտետում դասավանդել են ակադեմիկոսներ՝ Ս. Մերգելյանը, Դ. Մեդրակյանը, Էդ. Չուբարյանը, Ա. Բագդոնը, գիտության դոկտորներ՝ Բ. Թումանյանը, Մ. Մանուկյանը, Ա. Կարապետյանը, Վ. Սարաֆյանը, Ա. Դանիելյանը:

Առ այսօր ֆակուլտետը թողարկել է շուրջ 3000 շրջանավարտ, որոնց զգալի մասն աշխատում է նախընտրած մասնագիտությամբ: Ֆակուլտետի տարբեր

տարիների լավագույն շրջանավարտներից են Մ. Սայադյանը, Ռ. Գրիգորյանը, Հ. Զարգարյանը, Արամ և Արմեն Ծատուրյանները, Տ. Հախինյանը, Զ. Թորոսյանը, Ս. Փարսադանյանը, Ա. Ղուկասյանը, Ս. Սարգսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Սահակյանը և շատ ուրիշներ:

Այժմ ֆակուլտետում գործում են երեք մասնագիտական ամբիոններ՝

«Մաթեմատիկայի»

«Ինֆորմատիկա և ՏՄՄ» -ի

«Ֆիզիկայի»:

2015 թվականից վերանայվեցին և թարմացվեցին ինչպես աշխատանքային պլանները, այնպես էլ առարկայական ծրագրերը:

Այժմ մագիստրոսական կրթական ծրագրով բացի «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» մասնագիտություններից ընդունելություն է կատարվում նաև «Ինֆորմատիկա» մասնագիտությամբ:

Ֆակուլտետը մասնակցում է նաև Եվրոպական կրթական ծրագրերին: Այսպես օրինակ՝ 2015-16 ուստարում մասնակցելով Եվրոպական կրթական Erasmus Mundus մրցութային ծրագրին, ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Էդուարդ Հակոբյանը հնարավորություն ստացավ մեկ կիսամյակ սովորել Լեհաստանի՝ Լոձի համալսարանում, իսկ «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտության ուսանող Նարեկ Զաղինյանը՝ Լատվիայի Ռիգայի տեխնիկական համալսարանում:

Նշենք նաև, որ նույն Էդուարդ Հակոբյանը 2013 թվականին հանրապետական ուսանողական առաջնությունում ճանաչվել է որպես առաջնության «Լավագույն մարզիկ» և արժանացել ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրի, իսկ 2015-17թ.թ. ՎՊՀ-ի կողմից ընտրվել է ՀՀ ԱԺ Երիտասարդական խորհրդարանի պատգամավոր:

Ֆակուլտետի լավագույն ուսանողները համալսարանի ուսանողական խորհրդի անդամներ են, ֆակուլտետի և համալսարանի գիտխորհրդի անդամներ:

2016-17 ուստարում ընդունելություն կատարվեց «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ, որի պահանջարկը աշխատաշուկայում համեմատաբար մեծ է:

Այժմ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում բակալավրի կրթական ծրագրով կրթություն են ստանում 252 ուսանող, իսկ մագիստրոսական կրթական ծրագրով՝ 17 ուսանող:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի տեսլականը

Զգտել 2024թ.-ին դառնալու ՀՀ կրթության բնագավառում միջազգային չափանիշներին բավարարող բարձրորակ մասնագետներ պատրաստող, գիտական հետազոտություններ իրականացնող ֆակուլտետ:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի նպատակները և խնդիրները

Ռազմավարական ուղղություն 1. Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ

Նպատակ 1. Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի բավարարվածությանը համահունչ կրթական ծրագրեր, հագեցած կրթական արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով:

Խնդիր 1. Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, ներքին և արտաքին շահակիցների պահանջներին համապատասխան:

Քայլեր.

1. Վերանայել բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերը /մասնագրեր, առարկայական նկարագրեր, ուսումնական պլաններ/:

2. Մշակել բենչմարկինգի և լավագույն փորձի ուսումնասիրության ծրագիր:
3. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում շահակիցների ներգրավվածությունն ընդլայնող ծրագիր:
4. Ստեղծել ֆակուլտետի շրջանավարտների զբաղվածության մասին տվյալների բազա, ֆակուլտետի շրջանավարտների տվյալների բանկ:
5. Իրականացնել ուսանողների՝ կրթական ծառայություններից բավարարվածության տարեկան մոնիթորինգ և կարիքների գնահատում, հետադարձ կապի ապահովում:
6. Կատարել պրակտիկաների արդյունավետության քննարկումներ թե ուսանողների, թե պրատիկան ընդունող կազմակերպության հետ:

Խնդիր 2. Ապահովել ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության միասնականությունը:

Քայլեր.

1. Ապահովել սովորողների հետազոտական գործունեության իրականացման բավարար պայմաններ:
2. Ընդլայնել սովորողների կուրսային, ավարտական աշխատանքներում հետազոտական աշխատանքների ծավալը:

Խնդիր 3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը:

Քայլեր.

1. Մշակել ֆակուլտետի կրթական ծրագրերի կադրային, ռեսուրսային ապահովվածության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման, վերանայման գործող ներքին չափանիշների և ընթացակարգերի բարելավման ծրագիր:

2. Իրականացնել որակի ներքին ապահովման մշտադիտարկում:

Ռազմավարական ուղղություն 2. Հետազոտություն

Նպատակ 2.1. Նպաստել ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի և տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացմանը:

Քայլեր.

1. Ուսումնական և գիտական լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլանի մշակում և իրականացման ապահովում:
2. Ձևավորել ֆակուլտետի տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային շտեմարան:

Նպատակ 2.2. Նպաստել ֆակուլտետում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Քայլեր.

1. Նպաստել ֆակուլտետի դասախոսների կողմից մասնագիտական գրականության թարգմանության և դասագրքերի ստեղծման գործունեությանը:
2. Մեծ ուշադրություն դարձնել միջառարկայական կապերով պայմանավորված հետազոտական աշխատանքներին:
3. Ապահովել միջազգային բարձր վարկանիշ և ինդեքս ունեցող պարբերականներում ֆակուլտետի դասախոսների նյութերի հրատարակումը:

Նպատակ 2.3. Նպաստել ֆակուլտետում գիտական կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը:

Քայլեր.

1. Իրականացնել վերապատրաստման ծրագրեր ֆակուլտետի ՊԴԱ-ի կոմպետենտության բարձրացման, նորագույն փորձին ծանոթանալու նպատակով:
2. Նպաստել արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման ծրագրերի իրականացմանը:

Ռազմավարական ուղղություն 3. Միջազգային համագործակցություն և արտաքին կապեր

Նպատակ 3.1. Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Քայլեր.

1. Աջակցել ֆակուլտետի բոլոր ամբիոններին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում
2. Խթանել Ֆակուլտետի ուսանողների և ՊԴԱ-ի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը

Ռազմավարական ուղղություն 4. Հասարակական պատասխանատվություն

Նպատակ 4.1. Աջակցել հասարակության մտավոր, կրթական և գիտական առաջընթացին՝ նպաստելով ֆակուլտետի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Քայլեր.

1. Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ ֆակուլտետի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով:
2. Ձևավորել ֆակուլտետի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազա:
3. Կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած շրջանավարտների և ուսանողների միջև:
4. Ֆակուլտետում իրականացնել ռիսկերի տարեկան գնահատում:
5. Ստեղծել հասարակական և ուսումնական բարձր ակտիվություն ուսանողների խրախուսման ձևաչափեր: